ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 մարտի 2015 թ. N 4

«ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը	**Հյուսիսային համալսարան**
Հապավումը	**չունի**
Կազմակերպաիրավական ձևը	**ՍՊԸ**
Գործունեության հասցեն	**ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 15ա**
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը	**N 013 հավատարմագիր, 2001թ. առանց վավերականության ժամկետի**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2015 թ. մարտի 21-ի դռնբաց նիստում Հյուսիսային համալսարանի, ԿԳՆ-ի ներկայացուցիչների, փորձագիտական խմբի ղեկավարի, գործընթացի ՈԱԱԿ համակարգողի մասնակցությամբ քննարկեց,

գործընթացի ՈԱԱԿ համակարգողի մասնակցությամբ քննարկեց Հյուսիսային համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Հյուսիսային համալսարանի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման մասին Հյուսիսային համալսարանի գործողությունների ծրագիրը, ՈԱԱԿ-ի եզրակացությունը՝ամրագրեց հետևյալը:

Հավատրմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտիներկայացում	**27փետրվարի2012թ.**
բուհիինքնավերլուծությանները կայացում	**29 սեպտեմբերի 2012 թ.**
փորձագիտականայցիիրականացում	**3-7 դեկտեմբերի 2012 թ.**
փորձագիտականզեկույցիներկայացում	**1 մարտի 2013 թ.**
թերություններիվերացմանծրագրիներկայացում	**19 փետրվարի 2014 թ.**

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս հաշվի է առնվել, որ Հյուսիսային համալսարանը Հայաստանի Հանրապետությունում պետականորեն արտոնագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություն է, որը հիմնադրվել է 1996թ. և իրականացնում է «ՀՀ կրթության որակավորումները և դրանց ընդհանրական բնութագրերը» փաստաթղթի (ՈԱԾ) 6-րդ և 7-րդ մակարդակներին համապատասխան մասնագիտական կրթություն՝ ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսուցման ձևերով:

ՄՈԻՀ-ի կողմից պլանավորված և իրականացվող գործունեությունը հիմնականում համապատասխանում է ինչպես նրա առաքելությանը, այնպես էլ նրա առջև դրված նպատակներին: Համալսարանը պետական կրթական չափորոշիչներին համապատասխան մատչելի կրթական ծառայություններ է մատուցում սոցիալական լայն շերտերի համար:

Համալսարանում իրականացվող 8 մասնագիտություններից 6 հավատարամագրված են մինչև 2011 թվականը գործող հավատարմագրման կարգի և չափանիշների պահանջներին համապատասխան, իսկ 2001թ. համալսարանը ստացել է հավատարմագրված բուհի կարգավիճակ: Հավատարմագրերը չունեն վավերականության ժամկետ:

Հետևելով որակի արտաքին ապահովման նախկին համակարգի պահանջներին՝ համալսարանը իրականացրել է գործընթացների վերահսկողություն և հետևել միայն պետական կրթական չափորոշիչներին համապատասխանությանը: Կարևորելով որակի ապահովման նոր մոտեցումները և շարունակական բարելավման անհրաժեշտությունը՝ համալսարանը կամավոր մասնակցել է 2010թ. ՈԱԱԿ-ի նախաձեռնած հավատարմագրման գործընթացների փորձարկումներին: Հավատարմագրման նոր չափանիշներին համապատասխան իրականացնելով ինքնավերլուծություն, ինքնուրույն վերհանել մի շարք բացթողումներ, մասնավորապես, որակի ներքին ապահովման մեխանիզմների գործարկման և ելքային կրթական արդյունքներով ձևակերպված ծրագրեր ունենալու անհրաժեշտությունը:

Նախկին հավատարմագրումից հետո ՄՈՒՀ-ը իրականացրել է մի շարք փոփոխություններ՝ բարելավվել են շենքային պայմանները, ընդլայնվել են ուսումնառության ռեսուրսները, ձեռնամուխ է եղել ծրագրերի լրամշակմանը, շեշտադրվել է անհատական աշխատանքը ուսանողի հետ, վերանայվել են բազմաթիվ կարգեր:

Համալսարանն ունի ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններին բնորոշ կառավարման համակարգ: 2012թ.-ի սկզբին մշակվել և Հյուսիսային համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատվել է ՄՈՒՀ-ի նոր առաքելությունը, որին հետևել է համալսարանի նոր՝ գործունեության 10 ոլորտների համար նախատեսված Ռազմավարական ծրագրի մշակման գործընթացը, որը դեռևս ընթացքի մեջ է: Ընդ որում, ամբիոնները և դեպարտամենտները նույնպես մշակել և համալսարանի կայքէջում տեղադրել են իրենց Ռազմավարական ծրագրերը:

ՄՈՒՀ-ն ունի ուսանողների ընդունելության անցկացման քաղաքականություն և ընթացակարգ: Համալսարանը զուգակցում է ուսանողների համակազմի ձևավորման մի շարք մեխանիզմներ՝ մարզերի դպրոցներում շարունակաբար իրականացվող այցեր, տեղերում անցկացվող մասնագիտական կողմնորոշման զրույցներ, բաց դռների օրեր, օլիմպիադաներ, և այլն: Ուսանողական ակտիվ կյանքը, բազմապիսի անվանական կրթաթոշակների առկայությունը համալսարանը ապագա դիմորդների համար ավելի գրավիչ դարձնելու լրացուցիչ եղանակ է: Համալսարանը յուրահատուկ է նրանով, որ վարձավճարների մատչելիությունը հնարավորություն է ստեղծում կրթական ծառայություններ մատուցել սոցիալական լայն շերտերի համար: Ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների համար կազմակերպվում են լրացուցիչ պարապմունքներ: ՄՈՒՀ-ում ակտիվ գործում է ուսանողական խորհուրդը:

ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմը համապատասխանում է ՄՈՒՀ-ի առաքելությանը, իրականացվող ծրագրերի նպատակներին և պահանջներին: Պրոֆեսորադասախոսական կազմի համալրման քաղաքականությունը համապատասխանում է բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման կարգի պահանջներին: Համալսարանն ունի նաև մշակված դասախոսների ատեստավորման կարգ: ՄՈՒՀ-ի մի շարք լավագույն շրջանավարտներ ընդգրկված են համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմում: ՄՈՒՀ-ում մշակված է դասախոսների խրախուսման քաղաքականություն և

ընթացակարգ, կիրառվում են բարոյական և նյութական օգնության զանազան միջոցներ: Համալսարանում կիրառվում է դասախոսների հետազոտությունների տպագրության պրակտիկա՝ բուհի ֆինանսական միջոցների հաշվին:

ՄՈՒՀ-ում իրականացվել է դասախոսական կազմի վերապատրաստումներ՝ նվիրված դասավանդման մեթոդներին, որոնցից հաստատության ուսանողները ընդհանուր առմամբ բավարարված են: ՄՈՒՀ-ում դասավանդման և ուսումնառության մեթոդների, ինչպես նաև դասավանդման նյութերի ու ռեսուրսների արդիականացում իրականացվում է, սակայն հստակ մշակված քաղաքականություն և ընթացակարգերը նոր են ձևավորվում:

Համալսարանն առաջարկում է մագիստրոսական ծրագրեր, որոնց հաջող իրականացումը պահանջում է նորարական և գիտական հետազոտություններ: Մինչդեռ հետազոտական գործունեությունը համալսարանը չի համարում ռազմավարական կարևորություն: Հաստատության ամբիոններում ձևավորված է հետազոտությունների կարճաժամկետ պլաններ և տարեկան հաշվետվություններ ներկայացնելու պրակտիկա: Սակայն հստակեցված չեն հետազոտությունների ուղղվածությունները, դրանք ուսումնառության նպատակով անձնական նախաձեռնությամբ և նեղ թեմատիկայով իրականացվող աշխատանքներ են: Կիրառական բնույթ կրող հետազոտություններին մասամբ ներգրավվում են նաև ուսանողները, իսկ արդյունքները ներկայացվում են յուրաքանչյուր տարի ՄՈՒՀ-ում կազմակերպվող գիտաժողովներին: Համալսարանի ռազմավարական ծրագրում նախատեսված է ընդլայնել գիտահետազոտական ուղղությամբ տարվող աշխատանքը:

ՄՈՒՀ-ը տրամադրում է բավարար ռեսուրսներ հաստատության բնականոն կենսագործունեությունն ապահովելու համար: Հաստատությունում գործում են մի շարք ուսումնական լաբորատորիաներ, որոնք թույլ են տալիս պատշաճ իրականացնել կրթական ծրագրերը: Չնայած գործունեության տասնվեց տարիների ընթացքում համալսարանը զգալի ներդրումներ է կատարել և ապահովել է իր հռչակած նպատակների իրականացման ընթացքը, բայց և այնպես, իր առաքելությունը լիարժեք կերպով կյանքի կոչելու համար հաստատությունը դեռևս ունի նոր ռեսուրսների ներդրման կարիք:

Համալսարանում կիրառվում են ստորաբաժանումների պարբերական հաշվետվողականության առանձին մեխանիզմներ, որոնք համակարգ չեն կազմում. օրինակ՝ արտաքին շահակիցների առումով, հասարակությանը տրամադրվող ծառայությունների հատուկ մշակված ռազմավարություն և քաղաքականություն չկա:

Չնայած այդ հանգամանքին, որ 2011 թ.-ին ստեղծվել է արտաքին կապերի ստորաբաժանումը՝ արտաքին կապերը խրախուսող քաղաքականությունը և ընթացակարգերը մշակման փուլում են: Համալսարանը համագործակցության պայմանագրեր ունի Լեհաստանի "Ադամ Միցկևիչ" համալսարանի, 2010 թվականին Սանկտ-Պետերբուրգի կառավարման և էկոնոմիկայի համալսարանի հետ:

ՄՈՒՀ-ում առկա են որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր: Համալսարանի բոլոր մակարդակներում կարևորում են կրթության որակը և որակի ապահովումը: Տրամադրվել են բավարար մարդկային, նյութական և ֆինանսական

ռեսուրսներ գործընթացների կազմակերպման համար: Դասախոսները, ուսանողները և մյուս շահակիցները տեղեկացված են և մասնակցում են որակի ապահովման գործընթացներին: Ներդրված մեխանիզմները հիմնականում թույլ են տալիս վեր հանել ուսանողների կրթական կարիքները և արձագանքել դրանց:

Հյուսիսային համալսարանին առաջարկվում է հաշվի առնել և իր ռազմավարության շրջանակներում իրականացնել հետևյալ խորհրդատվությունները, որոնք ուղղված են հավատարմագրման գործընթացում փորձագիտական խմբի կողմից վերհանված խնդիրների հաղթահարմանը և բուհի գործունեության հետագա բարելավմանը.

Առաքելություն և նպատակներ.

1. ՄՈՒՀ-ի հավակնությունը մեր երկրի բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում բնակչության նվազ սոցիալ-տնտեսական հնարավորություններ ունեցող ներկայացուցիչների «մուտքի» դեպքում բավարար վերջնարդյունքի «ելքի» ապահովումն է, ուստի նպատակահարմար է, որպեսզի այս գաղափարը ամրագրվի համալսարանի ռազմավարական փաստաթղթերում:
2. Անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել արտաքին շահակիցների խնդիրների վերհանմանը և այդ ուղղությամբ տարվող աշխատանքներին՝ ելնելով հաստատության կողմից որդեգրված առաքելության և նպատակների տրամաբանությունից: Ընդ որում, ցանկալի է, որպեսզի ծնողները ևս դիտարկվեն որպես արտաքին շահակիցներ և հաշվի առնվեն նաև նրանց կարիքները:
3. Անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել որակի ապահովման ուղղությամբ իրականացվող վերահսկողությանը և ակտիվացնել մոնիթորինգային խմբի աշխատանքները՝ դրանցում շեշտելով արդյունքների չափելիության և հետադարձ կապերի ապահովման հարցերը:

Կառավարում ու վարչարարություն.

4. Անհրաժեշտ է ավելի մեծ ներդրումներ կատարել ՊԴ կազմի մասնագիտական վերապատրաստման, գրադարանային ֆոնդի հարստացման, համալսարանի միջազգային կապերի սերտացման և ուսանողանպաստ գործունեություն ապահովելու համար անհրաժեշտ այլ ասպարեզներում:
5. Անհրաժեշտ է ունենալ մշակված չափանիշներ, որոնց հիման վրա իրականացվող պարբերական գնահատումները թույլ կտան հստակ պատկերացում կազմել արդեն իսկ առկա գործընթացի կենսունակության և կայունության մասին:
6. Խորհուրդ է տրվում նաև մշակել ժամանակային տեսակետից հստակ ձևակերպումներ ունեցող կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ գործողությունների պլաններ, որոնք կբխեն համալսարանի և ստորաբաժանումների ՌԾ-ներից: Դրանց առկայությունը հիմք կստեղծի պլանավորելու և իրականացնելու մշտադիտարկում, որը պարբերաբար կարձանագրի իրականացված աշխատանքների պլանավորման և կատարման դինամիկան, ինչպես նաև դրանց համապատասխանությունը հաստատության առաքելությանն ու նպատակներին:

7. Կատարելագործման կարիք ունի կառավարման սուբյեկտների հաշվետվողականության հարցը: Հաշվետվողականության մշակույթի ձևավորման հարցում կարևոր է ոչ միայն վերընթաց հաշվետվողականության ավանդույթի առկայությունը, այլև՝ վարընթաց հաշվետվողականությունը, որը կառավարման ոչ պակաս արդյունավետ գործիք է: Ընդ որում, հաշվետվողականության մեխանիզմներն ավելի արդյունավետ կգործեն, եթե հաշվի առնվի համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների զարգացման դինամիկան:

Մասնագիտության կրթական ծրագրեր.

8. Կարևոր և անհրաժեշտ է կազմել սեփական ՄԿԾ-երը՝ հաշվի առնելով ուսումնառության ակնկալվող արդյունքները: ՄՈՒՀ-ում կազմած ՄԿԾ-երը անհրաժեշտ է ուղարկել արտաքին փորձաքննության տվյալ ոլորտի գործատուներին:
9. Կրթության որակի ապահովման համակարգում շատ կարևոր ներդրում կհանդիսանա նաև միջամբիոնային փոխքննարկումների կազմակերպումը: Անհրաժեշտ է ամբիոններում պարբերաբար կազմակերպել ՄԿԾ-երի քննարկման ուսումնամեթոդական սեմինարներ, ուր կներկայացվեն թե՛ դասալսումների արդյունքներ, և թե՛ կվերլուծվի ընթացիկ ՄԿԾ-ն, կմշակվեն մշտադիտարկման արդյունավետ մեխանիզմները, կքննարկվեն բարելավման ուղիները:

Ուսանողներ.

10. Անհրաժեշտ է իրականացնել լրացուցիչ և խորհրդատվական աշխատանքների արդյունավետության գնահատում ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների տեսակետից: Իրականացված աշխատանքի թույլ և ուժեղ կողմերի բացահայտումը թույլ կտա կատարել անհրաժեշտ շտկումներ և ապահովել այս գործունեության արդյունավետությունն ու շարունակականությունը:
11. Հարկավոր է ուսանողների համար կազմակերպել սեմինարներ՝ նվիրված, առհասարակ, մարդու իրավունքների և, մասնավորապես, ուսանողների իրավունքների պաշտպանության հարցերին: Դա կնպաստի այս խնդրի վերաբերյալ ուսանողների գիտակցության բարձրացմանը:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ.

12. Անհրաժեշտ է մշակել և ներդնել պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր:

Հետազոտություն և զարգացում.

13. Հարկավոր է հետազոտության ոլորտում մշակել երկարաժամկետ ռազմավարություն: Ընդ որում, հետազոտությունների իրականացումը ճիշտ կլինի կազմակերպել նախապես մշակված քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

14. Հետազոտական ոլորտում համալսարանի հետագա հաջողությունները որոշ չափով պայմանավորված են ամբիոններում պարբերական գիտակրթական սեմինարների կազմակերպմամբ, որոնցում ընդգրկված կլինեն ինչպես ամբիոնների աշխատակիցները, այնպես էլ ուսանողները:
15. Քանի որ համալսարանի հիմնական հետազոտական ուղղությունը հայագիտականն է, ապա հարկավոր է փորձել գիտական կապեր հաստատել սփյուռքում գործող հայագետների հետ, ինչու ոչ, նաև՝ այլազգի հայագետների հետ, որոնց գիտական հետաքրքրության շրջանակներում է, օրինակ Թումանյանի գրական ժառանգությունը:
16. Համալսարանում ակադեմիական ազնվությունն երաշխավորող և գրագողությունը կանխարգելող միջոցների քաղաքականության ու ընթացակարգերի ստեղծման և ներդրման խնդիրը նույնպես կարոտ է շուտափույթ լուծման:

Ենթակառուցվածք և ռեսուրսներ.

17. Անհրաժեշտ է ստեղծել մի շարք ընթացակարգեր, որոնք կնպաստեն գործընթացների կառավարման բարելավմանը:
18. Հարկավոր է մշակել ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:
19. Համալսարանի ֆինանսական քաղաքականության հարցերի պլանավորման, իրականացման, որոշ հարցերում մշտադիտարկման և բարելավման գործընթացներին սեփականատերը պետք է ներգրավի համալսարանի կառավարման բարձր և միջին օղակների ներկայացուցիչներին:

Հասարակական պատասխանատվություն.

20. Անհրաժեշտ է հասարակության շրջանում իրականացնել հարցում՝ պարզելու համար համալսարանի գործունեության մասին հանրային տեղեկացվածության աստիճանը, առկա պատկերացումների համընկնումը համալսարանում առկա իրողությունների հետ և այլն: Այդպիսի տվյալներ կարելի է ստանալ նաև համացանցում ակտիվ աշխատանք իրականացնելու ճանապարհով, սոցիալական ցանցերում հարցումներ կատարելով և այլն:
21. Խնդրո առարկա չափանիշի ուղղությամբ իրականացված և իրականացվելիք ծավալուն և բազմաբնույթ աշխատանքները պետք է դասակարգել ըստ դրանց արժեքային ուղղվածության, համակարգել, ձևակերպել հետապնդվող նպատակները, դրանց հիմքում դնել հստակ մեխանիզմներ, ստուգել արդյունավետության աստիճանը: Այս ամենը կնպաստի, որպեսզի համալսարանի կողմից իրականացվող աշխատանքները տեսանելի դառնան և ՝ընդգրկվեն ՄՈՒՀ-ի կողմից տարվող գործունեության մեջ՝ դառնալով դրանց օրգանական բաղադրամասը:

Արտաքին կապեր և միջազգայնացում.

22. Պետք է աշխատանքներ տանել Համալսարանի արտաքին կապերի աշխուժացման և միջազգայնացման քաղաքականության և ընթացակարգերի ստեղծման ուղղությամբ
23. Արտաքին կապերի բաժնի աշխատանքն առավել արդյունավետ կլինի, եթե այն համակցվի Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի, կայքէջի և ֆեյսբուքի պատասխանատուների, թերթի և ամսագրի խմբագրության հետ:
24. Ֆինանսական շոշափելի ներդրումներ պահանջող այս ոլորտի զարգացման համար հարկավոր է ակտիվացնել տեղական և արտասահմանյան հովանավորների որոնման աշխատանքները, ակտիվորեն մասնակցել դրամաշնորհային ծրագրերի: Այս հարցում հաջողությամբ գործելուն կօգնի արտաքին կապերի բաժնի աշխատակցի մասնակցությունը դրամական միջոցների հայթհայթման դասընթացների /fondraising/:

Որակի ներքին ապահովման համակարգ.

25. Շահակիցների տեղեկացվածության աստիճանի վերաբերյալ տվյալների ստացումը պետք է հիմնված լինի հետադարձ կապի մեխանիզմների պարբերական կիրառման վրա: Սա կնպաստի որակի ապահովման ներքին համակարգի օբյեկտիվ, իրատեսական և արդյունավետ շարունակական գործունեությանը:
26. Բենչմարքինգի համաձայնագրերի շրջանակներում ՄՈՒՀ-ի որակի ապահովման ինքնավերլուծությունն ամբողջությամբ կամ հատված առ հատված հարկավոր է հանձնել արտաքին փորձաքննության:

Ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերի փաթեթը, լսելով փորձագիտական խմբի ղեկավարի և բուհի ներկայացուցիչների կարծիքները՝ Հավատարմագրման հանձնաժողովը, գտնում է, որ Հյուսիսային համալսարանն ընդհանուր առմամբ իրականացնում է իր առջև դրված հիմնական նպատակը՝ մատչելի բարձրագույն կրթության ապահովում հասարակության լայն շերտերի համար:

Հաստատության կողմից իրականացվող մասնագիտությունների կրթական ծրագրերը համապատասխանում են սահմանված պետական չափորոշիչներին, սակայն իրականացվող մասնագիտությունների ցանկը, ընդունելության քաղաքականությունը, հետազոտական բնույթը և ուսանողների շարժունությունն ապահովելու համար ծրագրերը լուրջ վերանայման կարիք ունեն:

Բուհը լուրջ ուշադրություն պետք է դարձնի կրթական ծրագրերի մրցունակության և գրավչության ապահովման հարցերին: Ընդունելության ասպարեզում բացասական միտումների շարունակությունը կարող է ռիսկային լինել հաստատության համար:

Ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներին արդյունավետ հետևելու և ծրագրերն արդիականացնելու նպատակով՝ անհրաժեշտ է կիրառել կրթական ծրագրերի մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներ:

Մագիստրոսի կրթական ծրագրում համալսարանը պետք է ապահովի ուսանողների բավարար մասնակցությունը հետազոտական աշխատանքներին,

տրամադրելով համապատասխան նյութական և մարդկային ռեսուրսներ: Մագիստրոսի կրթական ծրագրի առաջին շրջափուլի ավարտից հետո անհրաժեշտ է իրականացնել ծրագրի ամբողջական փորձաքննություն և վերանայում:

«Արտաքին կապեր և միջազգայնացում» ոլորտում համալսարանն սկսել է ուշադրություն դարձնել ուսանողների շարժունությունը և միջազգային ծրագրերում դասախոսական կազմի մասնակցությունն ապահովելու համար միջոցների հայթհայթմանը, սակայն համալսարանը դեռևս չունի ռեսուրսներ միջազգայնացմանը լայն թափ հաղորդելու, կանոնակարգված և ակտիվ գործընթաց իրականացնելու համար: Կնքված համաձայնագրերը վատ են գործում և միջազգային հաստատությունների հետ գործակցությունը ձևական բնույթ է կրում:

Համալսարանն, ընդունելով վեր հանված թերությունները և տրված խորհրդատվությունները, որոնց իրականացումը ժամանակի պահանջ է, մշակել է «Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիր»: Թերությունների վերացման ծրագիրը միտված է բուհի գործունեության հետագա բարելավմանը և ծառացած խնդիրների օպերատիվ լուծում տալու մեխանիզմների ներդրմանը, որոնք կապահովեն բուհի նպատակների հարմապատասխանեցումն ընտրված սոցիալական սեկտորի կրթական կարիքներին: Այնուամենայնիվ, հրատապ լուծում պահանջող մի շարք խնդիրներ, մասնավորապես «Մասնագիտության կրթական ծրագրեր» և «Հետազոտություն և զարգացում» տիրույթներում, բուհի կողմից չեն կարևորվել բավարար չափով:

Հաշվի առնելով, որ համալսարանը, մեթոդաբար կիրառելով իր ունեցած որակի ներքին ապահովման մեխանիզմները, կարող է ողջամիտ ժամանակահատվածում վերացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունները և իրականացնել խորհրդատվությունները, Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇ Ե Ց

1. Հյուսիսային համալսարանին շնորհել **պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2/ երկու/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Մասնագիտության կրթական ծրագրեր», «Հետազոտություն և զարգացում», «Արտաքին կապեր և միջազգայնացում»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը և «Հյուսիսային համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների վերաբերյալ եզրակացություն»-ում նշված դիտողությունները թերությունների վերացման նախնական ծրագրի մասին:
3. Հաստատության գործունեության բարելավման համար, ելնելով արդի պահանջներից, հատուկ ուշադրություն դարձնել որակի ապահավման համակարգի

զարգացմանը, կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի արդիականացմանը, դասախոսների և ուսանողների շարժունությանը, ուսումնառության և հետազոտության կապի ամրապնդմանը, պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստմանը:

4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12.3 կետի պահանջներին համապատասխան 6 ամիսը մեկ անգամ ՈԱԱԿ-ին ներկայացնել գրավոր զեկույց իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ:

ՀավատարմագրմանՀանձնաժողովի նախագահ **Վ. Ուռուտյան**

2015 թ. մարտի 26
ք.Երևան